ԷՋԵՐ ՌՈՒՍ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ 1826 Թ. ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակի առթիվ)

Վ. Ա. ԲԵՎԼԱՐՅԱՆ

Ռուսաստանի հետ Վրաստանի և Ադրբեջանի միավորումից հետո օրակարգի խնդիր էր դարձել Արևելյան Հայաստանի հարցը։ Դեկաբրիստների զինված ելույթից (1825 թ.) հետո շահական արքունիքը «գտավ», որ հարմար ժամանակ է վերագրավելու Վրաստանն ու Ադրբեջանը։ Այդ ակնկալությամբ 1826 թ. հուլիսի 16-ին Պարսկաստանը նախահարձակ եղավ։ Նրա խնամակալ Անգլիան իր էմիսարների միջոցով ոտքի հանեց ադրբեջանական մի քանի խաների և լեռնականներին։ Հարձակման առաջին օրերին պարսկական մեծաքանակ զորքի ճնշման տակ Փամբակ-Շորագյալի ռուսական սահմանապահ զորաջոկատները նահանջեցին Ջալալօղլի (այժմ Ստեփանավան)։ Պարսկական բանակները լուրջ դիմադրության հանդիպեցին Շորագյալի խարում և Խլի-Ղարաքիլիսա հայկական գյուղերի բնակչության կողմից։

Այս ճակատամարտերը պատմության մեջ մտան որպես երկրագործ բնակչության մղած հերոսական պայքարի դրվագներ։ Հատուկ ուշադրության արժանացած այդ ճակատամարտերում հայերի կրած զոհերի մասին Ներսես Աշտարակեցին Պետերբուրգի հայոց արքեպիսկոպոս Հովհաննեսին հասցեագրած 1826 թ. օգոստոսի 2-ի նամակում գրում էր. «Գյումրիի մոտ գտնվող հայկական Ղարաքիլիսա գյուղից գերեցին 600 տղամարդ, 515 կին։ Ջնայած հայերի դիմադրությանը պարսիկների կողմից տարվող գերիների թիվը բազմապատկվեց և հասավ 2000-ի»[1]։ Այդ դժվարին օրերին հարևան երեք ժողովուրդներն էլ միասնաբար էին հանդես գալիս Անդրկովկաս ներխուժած ընդհանուր թշնամու դեմ։ Օրինակ, 1826 թ. օգոստոսին Ջալալօղլի նահանջող ռուսական զորամասերին օգնելու համար «Ալեքսանդր Ճավճավաձեի 50 հոգուց բաղկացած ջոկատը ուղարկվեց Բզովդալ, որից կենդանի վերադարձան միայն 19-ը»[2]։ Վրացական աշխարհազորային ջոկատներից աչքի էր ընկնում հատկապես Փամբակ-Շորագյալի սահմանային զորամասերի հրամանատար գնդապետ Սեվերսամիձեի ջոկատը, ինչպես նաև Գուրաշևի, Մալիաբելովի՝ լեռնային օսերի, մայոր Միրզաջան Մադաթովի գլխավորած աշխարհազորայիններ[3]։ Գյումրեցի Մարտիրոս Վեքիլյանի հեծյալ ջոկատը, թվով 20—30 մարդ, անմատչելի արահետներով թափանցում էր ամենուր, կատարում ամենադժվարին առաջադրանքները և օգնում ռուսական զորքերին։

---

[1] ЦГИА в Ленинграде, ф. 880, оп. 5, д. 18, л. 11—14.

[2] В. Потто, Кавказская война в отдельных эпизодах, легендах и биографиях, т. III, вып. I, СПб., 1888, *էջ 52։*

[3] «Русский архив», 1889, кн. 1, М., *էջ 581։*

Ցարական նշանավոր զինվորական, դսեղցի Հովակիմ Թումանյանի հայրը՝ 100-ամյա Մեհրաբը, ռազմի ահեղ օրերին ուժ ու եռանդ ստացած շրջում էր ու ժողովրդին հորդորում, թե «մեր ճամբեքը թշնամու համար կապ ու փակ պիտի լինեն, նամարդի համար թուր ու թվանք ունենք, տղամարդի համար աղ ու հաց»։

Ռուսական զորամասերի նահանջի ծանր օրերին առանձնահատուկ նշանակություն ստացավ Դիլիջանի կիրճի պաշտպանությունը, որը հսկայական զոհեր պահանջեց։ Սակայն թշնամու ներխուժումը խաթարվեց տեղացիների միացյալ, համագործակցված ուժերի շնորհիվ, որոնք մեծ աջակցություն ցույց տվեցին այստեղ ուղարկված կոմս Սիմոնովիչի զորամասին։ Այս կարևորագույն անցուղու պաշտպանության ժամանակ առանձնապես աչքի ընկան Ղազախ-Շամշադինի հայ և ադրբեջանցի աշխարհազորային ջոկատները, որոնց գլխավորում էին հախումեցի Գ. Մանուչարյանը, Սարգիս Լալիդյուղացին, Սարգիս Վարշամյանը, աչաջրեցի Հովհաննես և Հաթամ Ալիբեկյանները, մելիքգյուղացի Հովհաննես և Առաքել Սարիբեկյանները, ուզունթալեցի Աշիրը, աղդանեցի Ասատրյանը, չորաթանցի Բալու Քալանթարյանը, չինչինցի Բրուտ Սարգիսը[4] և շատ ուրիշներ։ Ադրբեջանցիներից մեծ հռչակ էին վայելում դազախեցի Աբդուլլա աղայի, Թաթարինովի, Թուրքեստանովի և Ռոստոմ Ալիի զորաջոկատները[5]։ Շատ աշխարհազորայիններ հետագայում Շամխորի ճակատամարտում ցուցաբերած արիության համար արժանացան կառավարական զանազան պարգևների։

Հայկական զորաջոկատների առանձին խիզախներ հրաշքներ էին գործում հարձակվող պարսիկներին դիմագրելու և հետախուզության ժամանակ։ Բնաշխարհին քաջածանոթ հետախույզներից էր Ղշլաղ (այժմ Ժդանով) գյուղի գյուղապետ Ավագ Պապոյանը։ Լոռվա սարահարթի ռուսական կայազորը տեղեկություն չուներ Երևանի, Ղարաբաղի վիճակի և թշնամու մտադրությունների մասին, և իշխան Սեվերսամիձեն հետախույզ ընտրեց Ավագին։ Նա գերազանց տիրապետում էր ռուսաց և պարսկերեն լեզուներին, գիտեր տեղանքը, պարսիկների սովորույթները։ Ինչքան էլ ցարական բյուրոկրատ պետերը անտեսում էին հայ ժողովրդի մասսայական օգնությունը, բայց չէին ժխտում, որ հետախույզները մեծ մասամբ հայերն են։ Ռուսական զորաջոկատներին ապավինած անպեն հայությունը, համոզված լինելով, որ իր փրկությունը բոլոր դեպքերում կապված է Ռուսաստանի հետ, ռուսական իշխանության համար անում էին այն ամենը, ինչ հնարավոր էր։ Դրա լավագույն օրինակն են Բղովդալ գյուղի բնակիչ Ասատուրի սխրանքները։ Նա աչքի էր ընկել որպես քաջարի հետախույզ։

1826 թ. օգոստոսին Գորիի, Դուշեթիի և Թբիլիսիի գավառներից հավաքագրվեց 1800 մարդ՝, որոնք Երմոլովի հրամանով շարժվեցին դեպի ռազմաճակատ։ Նրանցից 900 հոգի ուղարկվեցին Ջալալօղլիի պաշտպաններին օգնելու, մյուսները՝ դեպի Աղստաֆա, ապա Շուշի։ Առանձնապես աչքի ընկան Գորիի գավառապետ մայոր Դավիդ Թարխանովը, Դուշեթիի իշխան Բագրատիո-

---

4 ЦГИА Аз. ССР, ф. 130, д. 10, л. 18, 19, 20. Տե՛ս նաև Հ. Ս. Ավագյան, Ս. Ս. Սաղումյան, Դեղատեսիլ Շամշադինի բարգավաճումը, Երևան, 1967, էջ 4։

5 «Русский архив», 1889, кн. 4, էջ 177—187։

6 «Военный журнал», 1829, № 10, էջ 83։

նը և Ծղնեթի գյուղացի Արսեն Բեհբությանը։ Վերջինս իր հարյուրյակի հետ մասնակցեց Միրաքի նշանավոր ճակատամարտին։

Վաղուց ի վեր ռուսական կողմնորոշում ունեցող անդրկովկասյան ժողովուրդները համատեղ ջանքեր էին գործադրում երկրամասի ազատագրման համար։ Պարսիկներին չհաջողվեց կրոնական պրոպագանդայի միջոցով սեպ խրել հարևան ժողովուրդների միջև, թեև Աբբաս Միրզան փորձում էր նրանց համոզել, որ չեղոք մնան, չօգնեն ռուսական բանակին, քանի որ «ինքը գործ ունի միայն ռուսների հետ»[7]։

Մերկացնելով թշնամու նենգությունները, Խ. Աբովյանը գրում էր. «Յա պատիվ, մեծություն էին խոստանում, որ խաբեն նրանց, յա պատիժ պատուհաս տալիս՝ որ վախենան, ոսիցը ձեռք վերցնեն»[8]։

Սակայն անդրկովկասյան ժողովուրդների ռուսական կողմնորոշումը անսասան էր։ Պատերազմի առաջին օրերից Ադրբեջանի Ասլան խանը դեմ-հանդիման կանգնեց պարսիկներին, ռուսական զորքերի հետ համատեղ պայքարեց մինչև պատերազմի հաղթական ավարտը[9]։ Նա ռուսական իշխանությանը մատուցած ծառայությունների համար հետագայում արժանացավ կառավարական պարգևի՝ Վլադիմիրի 2-րդ աստիճան շքանշանի։ Ռուսական զորքերին խոշոր ծառայություններ մատուցողներից էր նաև Միրզա Ադիգյոզալ բեկը, որը հայ-ադրբեջանական միացյալ ջոկատով պաշտպանում էր Զոդի անցուղին[10]։

1826 թ. ամռան ու աշնան ամիսներին պատերազմական դաժան արհավիրքների օրերին հայ-ադրբեջանական սուրհանդակ կապավորներից հայտնի էին Գրիգոր Փիլիպոսյանը և զազախեցի Ռոստոմ Ալին, որոնք չէին խուսափում ռազմական դժվարին խնդիրներ կատարելուց[11]։ Այդ օրերին հայ-ադրբեջանական գյուղացիական ջոկատները վրացական 2000-անոց միլիցիայի և գնդապետ Գրեկովի զորամասի հետ, որոնց մեծ օգնություն ցույց տվեցին Դիլիջանի հայերը, մարտեր էին մղում Ղազախ-Շամշադինի տերիտորիայում։ Դիլիջանի բնակիչները մերժեցին թշնամու առաջարկը՝ լեռնանցքը անպաշտպան թողնելու մասին։

Ղազախ-Շամշադինի հայ-ադրբեջանական զորաջոկատները հայտնվում էին մերթ Դիլիջանի լեռնանցքում, մերթ՝ Մեծ Ղարաքիլիսայում։ Իսկ Հաջի Մամիի աղայի հեծյալ զորաջոկատը մշտապես կանգնած էր Էշակ Մեյդանի լեռներում, ուր տեղացիների հետ միացյալ ուժերով պաշտպանում էին Աղստաֆայում կենտրոնացվող ռուսական բանակների թիկունքը։

Երբ Հաջի Մամեդի զորաջոկատը գործում էր դիլիջանցիների պաշտպանության դիրքերում, նույն ժամանակ «Գ. Մանուչարյանի 500-յակը ետ վերադարձրեց Պարսկաստան տարվող ադրբեջանցիների 300 ընտանիքներին»[12]։ Դիլիջանի մոտակայքի ռուսական փոքրաթիվ զորքերի մի շարք անհաջողու-

---

7 Տե՛ս Զ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957, էջ 107—108։

8 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու (8 հատորով), հատ. 3, Երևան, 1948, էջ 121։

9 «Русский инвалид», СПб., 1827, № 231.

10 «История Азербайджана», т. II, Баку, 1960, էջ 36։

11 ЦГИА Аз. ССР, ф. 130, д. 9, л. 1—2.

12 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 42, գ. 64, թ. 1—2։

թյուններից հետո 1826 թ. օգոստոսի 6-ին նախկին գավառապետ Սնեժևակուն փոխարինած իշխան Օրբելիանին ձեռնամուխ եղավ ռազմական խոշոր նշանակություն ունեցող անցուղու պաշտպանության գործին։ Նրա անմիջական աջակիցներից «աչքի ընկան հայկական աշխարհազորայինների հրամանատարներ Առաքել և Հովհաննես Սարիբեկյանները»[13], որոնց հետ ուս-ուսի տված կռվում էին վրացի և ադրբեջանցի աշխարհազորայիններ։ Նույն ժամանակ Լոռվա կողմերում հայ բնակչության ուժերի մոբիլիզացման, ռուսական բանակին օգնելու գործում մեծ գեր խաղաց նշանավոր զինվորական Հովակիմ Թումանյանը[14]։ Հայ խիզախների մի փոքր ջոկատի գլուխ անցած նա «ոտի տակ էր տալիս Սիս բերդից մինչև Հաղպատ, Սանահին,— գրում է նրա թոռ Հովհաննես Թումանյանը,— և սիրտ էր տալիս քարանձավներում կուչ եկած ժողովուրդներին»[15]։

Այսպիսի խիզախները, որոնց թիվը շատ էր Հայաստանում, իրենց ցայտուն կերպավորումն են գտել հանձին Խ. Աբովյանի «Վերքի» հերոս Աղասու։ 1826 թ. պատերազմական գործողությունները սկսվելուց հետո Կախեթից դեպի Աղստաֆա շարժվող ռուսական 20-րդ հետևակային դիվիզիայի ստորաբաժանումներից մեկի հրամանատարն էր վրացի գեներալ-մայոր Էրիստովը։ Աղստաֆա ժամանեցին նաև վրացական երկու գումարտակները, որոնք միանալով Դուշեթիի և Գորիի կողմերից եկած Յակով Օրբելիանիի, փոխգնդապետ Ասլանի, մայոր Նիկոլայ Թարխանովի, Զաքարիա Կուրդանիձեի զորաջոկատներին, անցան գեներալ Վ. Ռ. Մադաթովի ընդհանուր հրամանատարության տակ[16]։ Մինչդեռ ռուսական ուժերը կկենտրոնանային Աղստաֆայում, Դիլիջանի լեռնանցքի պաշտպանների դրությունը կրիտիկական էր դառնում, ուստի վրացի գնդապետ Սեվերսամիձեն Ջալալօղլիից օգնության ուղարկեց ադրբեջանական մի ջոկատ, որը բաղկացած էր 200 հոգուց։ Կորպուսի հրամանատարի կարգադրությամբ զինծառայության ենթակա հայ և վրացի բոլոր տղամարդիկ 20 օրվա ընթացքում ներկայացան Թբիլիսի, ապա ռազմի դաշտ[17]։ Կովկասյան մյուս ժողովուրդներից Աղստաֆա զորական հասան նաև օսերի և կաբարդացիների աշխարհազորայինները՝ 244 հեծելազորային և 153 հետիոտն, իսկ Թելավիից և վրացական Սղնախից եկան 361 հեծյալ և 60 հետիոտն մարդ[18]։ Ընդհանուր թշնամու դեմ կովկասյան ժողովուրդների համատեղ պայքարում անվանի զինվորականներից էին՝ հայերից գեներալ Վ. Ռ. Մադաթովը, մայոր Միրզաջան Մադաթովը, Դավիթ և Հովհաննես Ղորղանյանները, Գրիգոր, Գևորգի և Դավիթ Զերքեզյանները, կապիտան Շաղբաթյանը, մայորներ Մելիքյանն ու Սմբատյանը, շտաբս-կապիտան Հախվերդյանը և շատ ուրիշներ, ադրբեջանցիներից գեներալ Ալյար աղա Դիլիբոզովը, սպաներ Քելբ Ալի խանը, Ռոստոմ Ալին, Հաջի Մամեդ աղան, Բակիխանովը, Իզմայիլ Վեզիրովը և ուրիշներ, վրացիներից գեներալ Էրիսթովը, գնդապետ Սեվերսամիձեն, Ա. Ճավճավաձեն, սպաներ Ջափարիձեն, Յասո և Ջուրաբ Անդրոնիկովները, Իվան Վաչնաձեն և շատ ուրիշներ։

---

13 ЦГИА Груз. ССР, ф. 16, д. 3591 и Аз. ССР, ф. 130, д. 10, л. 18, 19, 30.
14 ЦГИА Груз. ССР, ф. 2, л. 2015.
15 Հ. Թումանյան, Երկեր, հատ. 1. Երևան, 1958, էջ 302—304։
16 АКАК, т. VII, էջ 328—333։
17 ЦГИАЛ, ф. 880, д. 18, л. 18—19.
18 «Кавказский сборник», т. 24, Тбилиси, 1903, էջ 224։

Չնայած ռուսական հրամանատարության ձեռք առած միջոցներին, պատերազմի սկզբնական շրջանում պարսիկները որոշ հաջողություններ ունեցան։ Ռուսական կողմի համար ծանր կացություն ստեղծվեց հատկապես Շուշիում, որի 1700-անոց կայազորը շրջակա 22 հայկական գյուղերից այստեղ փախած բնակչության հետ 47 օր պաշարվեց ամրոցում։ Պարենի սպառման պատճառով պաշարվածների դրությունը վատացավ։ Հացահատիկը ջրաղաց հասցնելու դժվարին պարտականությունը իրենց վրա վերցրին հայ Շահրիար Մադաթովը և ադրբեջանցի Սաֆար Ալի բեկը, որոնք արհամարհելով մահվան վտանգը, կատարեցին առաջադրված խնդիրը։ Շուշեցի հայ և ադրբեջանցի բնակիչները ռուսական կայազորի սննդի համար տրամադրեցին 1142 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։ Զինված հայերի թիվը (կայազորին օգնող) հասավ 3000-ի[19], որոնց ընդհանուր հրամանատար էր նշանակված Շուշիի քաղաքապետ Աղաբեկ Քալանթարյանը։ Ռուսական իշխանությանը մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվեց Վլադիմիրի շքանշանով և ոսկե մեդալով, իսկ Պետրոս բեկ Մադաթովը, Բաղդասար Դոլուխանովը և վերջինիս երկու տղաները՝ ոսկե մեդալներով[20]։

Ադրբեջանցի հետախույզ կապավորներից աչքի ընկան Մոլլա Միրզան, Ղազախի գավառի Սալահլու գյուղացի Աբբաս Ալի Սուլթանը (որը հետագայում Սարդարաբադի և Երևանի գրավման համար ստացավ Վլադիմիրի շքանշան և ոսկե մեդալ[21]) և ուրիշներ։ Շուշիի հերոսական պաշտպանության ժամանակ աչքի ընկան, ինչպես ցույց են տալիս նյութերը, Ղարաբաղի մի շարք գյուղերի և մասնավորապես Հադրութի շրջանի Բոնաձոր (Բանազուր) գյուղի հայ գյուղացիները, որոնք հասել էին Շուշի և պատսպարվել ամրոցում։ Իսկ Կաչաղակաբերդում ամրացած հայերը գիշերվա խաղաղ ժամերին պաշարվածների համար սննդամթերք էին բերում։ Այս գործում նշանակալից դեր խաղաց Ափի բեկը, որը ամրոցի պարետ Ռեուտի կողմից տրված հանձնարարությունները կատարելու և զինված ընդհարումների ժամանակ ցուցաբերած արիության համար պարգևատրվեց արծաթե սրով։

Շուշիի ամրոցի բազմօրյա հերոսական պաշտպանության ժամանակ իր սխրանքներով աչքի ընկավ Ղարաբաղի Նախիջևանիկ գյուղից Փիրումյանների գերդաստանը. շատերն արժանացան զանազան պարգևների և զինվորական աստիճանների։ Այդ մասին «Շուշի ամրոցի պաշտպանության համար պարգևատրվողների ցուցակում» Աղիբեկ Փիրումյանի անվան դիմաց կարդում ենք. «...մինչև այդ ուներ խիզախության համար ոսկե մեդալ, իսկ այժմ տրվում է պորուչիկի աստիճան և 200 ռ. թոշակ։ Նա կատարել է Շուշիի պարետի բոլոր հանձնարարությունները»[22]։

Մինչդեռ շարունակվում էր Շուշիի պաշարումը, ռուսական զորքերը 1826 թ. սեպտեմբերի առաջին կեսին Շամխորի և Ելիզավետպոլի մոտ տված հաղթական ճակատամարտերում ջախջախեցին հակառակորդի գերակշիռ ուժերը՝ փախուստի մատնելով թշնամուն։ Այդ նշանավոր ճակատամարտերում տարած հաղթանակների մեջ պատվավոր բաժին ունեին Կովկասի ժողովուրդ-

---

19 ЦГВИА, ф. ВУА, д. 894, л. 4.
20 ЦГИА Груз. ССР, ф. 16, д. 9360, л. 112.
21 ЦГИА Груз. ССР, ф. 548, д. 91, л. 64 и ф. 11, д. 95, л. 70.
22 ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 2044, л. 109.

ները։ Միայն հայ-վրացական աշխարհազորայիններից 230 հոգի արժանացան կառավարական բարձր պարգևների[23]։

Պետերբուրգ ուղարկած մի շարք գրություններից պարզվում է, որ ճակատամարտերի ակտիվ մասնակիցների շարքերում կային նաև լեռնականների 244 հոգուց բաղկացած հեծյալ և 153 հոգուց կազմված հետիոտն աշխարհազորային ջոկատներ[24]։

Շամխորի ճակատամարտից հետո Մադաթովի կողմից կազմված՝ «Սեպտեմբերի 3-ին Շամխոր գյուղի տակ Աբբաս Միրզայի որդի Մամադ Միրզայի և Ամիրխան սարդարի զորքերի ջախջախման ժամանակ աչքի ընկած սպաների» 180 անունից բաղկացած ցուցակում միայն Ղազախ գավառի բնակիչներից Մադաթովը ներկայացրել էր 41 մարդ, որոնց կեսը հայեր էին՝ հատկապես Աղստևի հովտի գյուղերից։ Հիշվում են, օրինակ, Ասատրյանը, Սարգիս Լալիգյուղացին (գյուղագիր Արշակ Ագապյանի հայրը), Աղա Ղորդանյանը, Հովհաննես Ղորղանյանը, Ղահրաման Կարաքեշիշյանը և շատ ուրիշներ։

Պարգևատրվողների ցուցակում հանդիպում ենք նաև վրացիներից Գրիգոր և Ասլան Օրբելյանիների, Զուրաբ և Յասո Անդրոնիկովների, Իվան Վաչնաձեի, գեներալ Էրիսթովի, Գրիգոր Զոլոկաևի, Աթանաձեի, Ռևազ Դիմիտրի, Զաալ, Յասո Սակաևների, Թավդլի Զոլոկաևի, Թելավցի չորս տանուտերերի, սղնախցի 15 իշխանների անուններին, ինչպես նաև Կազբեկների տոհմից 5 հոգու անվան[25]։ Շամխորի և Ելիզավետպոլի հաղթական ճակատամարտերը բեկում առաջացրին պատերազմի ընթացքի մեջ։ Պարսկական զորաբանակները խուճապահար նահանջեցին Արաքսի աջափնյա կողմերը։

1826 թ. հոկտեմբերի 11-ին Շուշիի պաշարումը վերջացավ։ Նահանջող հակառակորդին սկսեցին հետապնդել և ամրոցի պաշտպանները։ Ամրոցի պաշտպանության ժամանակ աչքի ընկածներին մի քանի ցուցակով ներկայացրին կառավարական պարգևի։ Ցուցակներից մեկը կոչվում էր «Եգերական 42-րդ գնդի ազնվականական կրտսեր սպաների և կամավորների ցուցակ», իսկ մյուսը՝ «Հարարադի չինովնիկների և պատվարժան հայերի ցուցակ»։ Եթե առաջին ցուցակով պարգևատրված 40 հոգուց 5-ն էին հայեր[26], ապա երկրորդում հայերի թիվը հասնում է մոտ հինգ տասնյակի[27]։ Պարգևատրվածների մեջ առանձնապես նշանավոր էին Հովակիմ Թումանյանը, Զավաթ Ավշարյանը, Աղա Փիրում Դանիելբեկովը, տանուտեր Բաբան, Համզան, Վարդանը, Ավագ բեկը, Աթա Գրիգորյանը, Ղուլի Ղուլյանը, Հովհաննես Սարգսյանը, Խուդո Շահինյանը և շատ ուրիշներ[28]։

Շուշիի հերոսամարտերի մասնակիցներից զանազան խրախուսանքների արժանացան նաև քառասունից ավելի ռուս զինվորականներ և ոչ քիչ թվով ադրբեջանցիներ։ Կովկասի ռուսական իշխանությունները, ելնելով իրադրությունից, ձեռնամուխ եղան պարենի և անասնակերի հայթայթմանը։ Հովհաննես Ղորդանյանի ջանքերի շնորհիվ 1826 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Շաքիի և Շիրվանի խանություններից հավաքվեց 6775 փութ ցորեն,

---

23 «Кавказский сборник», т. 24, էջ 223—224։
24 ЦГВИА, ф. ВУА, д. 4344, л. 1—2.
25 ЦГИА Аз. ССР, ф. 130, д. 10, л. 14, 18.
26 ЦГИА Груз. ССР, ф. 2, д. 2044, л. 109—116.
27 Նույն տեղում։
28 «Кавказский сборник», т. 25, Тбилиси, 1906, էջ 6—22, 77—82։

20866 փութ ձավար, պաքսիմատ և ալյուր[29]։ Պարենամթերքի և անասնակերի տեղափոխման գործում ակտիվ մասնակցություն ունեցավ Շաքիի, Շիրվանի հայ և ադրբեջանցի բնակչությունը։ Օրինակ, միայն Շաքիի երեք մահալների 21 գյուղերից 322 հայ սայլապաններ իրենց միջոցներով Բաքվից, Շամախիից Զարդոբ և Շուշի տեղափոխեցին ավելի քան 2032 տոննա բեռ[30]։

Ռուսական բանակին անդրկովկասյան ժողովուրդների կազմակերպած տնտեսական օգնության մասին պարզ պատկերացում են տալիս 1826 թ. վերաբերվող հետևյալ տվյալները.

Ռուսական զորքերին օգնության կարգով տրված է.

Բնակավայրի անունը	Հացահատիկ (փութ)	Անասնակեր (փութ)	Բեռնատար անասուն (հատ)	Բեռնասայլ (հատ)
Ղազախ	3591	2666	1000	100
Խորչալու	1851	1334	—	100
Շամշադին	6676	—	—	
Ղարաբաղ	2052	—	—	
Վրաստան 189 բնակավայրերից	—	—	—	8000
Գորի	2000 չետվերտ	—	—	
Ընդամենը . . .	14170 փութ 2000 չետվերտ	4000	1000	8200

Անդրկովկասյան ժողովուրդների կողմից ռուսական զորքերին ցույց տված օժանդակությունը այնքան շոշափելի էր, որ գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչը Կովկասի ռուս հրամանատարներին զգուշացրեց, որ հետագա արշավանքների ժամանակ պետք է մեծ մասշտաբների հասցնել տեղացիների օգնությունը։ Այդ օգնությունը մեծ չափով զգացվեց նաև 1827 թ., երևանյան երրորդ արշավանքի ժամանակ։

Երևանի գրավումից առաջ Արարատյան դաշտից և Շիրակի կողմերից պարեն հայթայթող ռուսական ջոկատները մարդկային զոհերի գնով էին հաջողություններ հասնում։ Օրինակ, Արաքսի աջափնյա կողմերից պարենամթերք տեղափոխող 2100 հոգուց կազմված զորամասից 300 հեծյալներ, որոնք զբաղված էին ձեռք բերած միջոցները Երևան փոխադրող բեռնասայլերի հրսկողության գործով, միայն մի ընդհարման ժամանակ կորցրին 100 հոգի, որից 8-ը հայեր էին[31]։

Պակաս դժվարություններ չէր ներկայացնում հացահատիկ աղալու գործը։ Պարսիկները փչացրել էին ջրաղացները, իսկ տեղացիները տրամադրեցին 76

---

[29] ЦГИА Аз. ССР, ф. 91, оп. 1, д. 44, л. 6, 38—39, 94.

[30] ЦГИА Аз. ССР, ф. 73, оп. 1, д. 13, л. 47 и ф. 91, оп. 1, д. 96, л. 399, 428—429, 492, 517—522.

[31] «Русский инвалид», 1827, № 257.

ձեռքի աղաց[32]։ Այդ օրերին Վրաստանից և Ադրբեջանից հազարավոր սայլապաններ իրենց սեփական միջոցներով պարենամթերք և ռազմամթերք էին տեղափոխում Թիֆլիս—Երևան, Բաքու—Շուշի։ Հայ գյուղացիները ցույց էին տալիս նաև այլ կարգի օգնություն[33]։

Երևանյան երրորդ արշավանքի նախօրյակին ռուսական բանակին օգնում էին նաև Աստրախանի նավատեր հայ վաճառականները, որոնք Բաքու տեղափոխեցին 1000 տոննա կշռաչափով զենք և զինամթերք[34]։ Բաքվից Շուշի փոխադրության ժամանակ օգտագործվում էին հայ և ադրբեջանցի գյուղացիների բոլոր սայլերը։ Միայն Շաքիից հավաքագրված մի քարավանը բաղկացած էր 264 սայլից, իսկ Շիրվանինը՝ 145[35]։

Այսպես, հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդները ամեն կերպ օգնում էին ռուսական զորքերին՝ թե անձնական մասնակցությամբ և թե նյութական օժանդակությամբ։ Ռուս և անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը պատերազմական փորձությունների դժվարին օրերին ավելի ամրապնդվեց։ Այս գործում զգալի դեր խաղացին նաև Կովկաս աքսորված դեկաբրիստները, որոնք գործուն մասնակցություն ունեցան ռուս-պարսկական պատերազմին[36]։

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ВЗАИМНОЙ ПОМОЩИ РУССКОГО И ЗАКАВКАЗСКИХ НАРОДОВ В 1826 г.

(К 150-летию присоединения Армении к России)

В. А. БЕГЛАРЯН

(Резюме)

В статье освещается военная и экономическая помощь, оказанная в 1826 г. народами Закавказья русской армии во время русско-персидской войны. На конкретных примерах показано, что эта помощь сыграла немалую роль в достижении победы России над Персией. Во время военных действий стал еще более крепок братский союз между русским и закавказскими народами.

---

32 ЦГВИА, ф. ВУА, д. 4338, л. 49.

33 ЦГИА Груз. ССР, ф. 548, д. 9, л. 34—36. «Военный журнал», 1828, № 1, էջ 179։

34 ЦГИА Аз. ССР, ф. 47, д. 1, л. 1—2.

35 Նույն տեղում, թ. 56։

36 Տե՛ս Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։